



## ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Երևան – 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« 08 » 09 2022 թ.

N 709.6/29676-2022

MuTQ 52-02, 12-09-2022

**Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հանրային ծառայությունների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ տիկին Անահիտ Ասատրյանին  
/Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 26/3, սենյակ 501/**

Հարգելի տիկին Ասատրյան,

Ի պատասխան Ձեր կողմից ներկայացված թիվ 42-01 գրության՝ հայտնում եմ հետևյալը.

2014 թվականի հուլիսի 1-ի «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով 2014 թվականի հուլիսի 1-ից ներդրվել է պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության միասնական համակարգ, որով պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող բոլոր անձանց հիմնական աշխատավարձի փոփոխությունն իրականացվում ընդհանրական հիմունքներով՝ բազային աշխատավարձի փոփոխության միջոցով:

Հիշյալ օրենքի 5-րդ հոդվածի կարգավորումների համաձայն՝ բազային աշխատավարձի չափը ուղղակիորեն կապված է նվազագույն աշխատավարձի (անվանական չափի) հետ:

2023 թվականի հունվարի 1-ից նախատեսվում է նվազագույն ամսական աշխատավարձի բարձրացում, որի շրջանակներում քննարկվում է նաև պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի բարձրացման հարցը, ուստի՝ նվազագույն ամսական

աշխատավարձի բարձրացումը կարող է հանգեցնել նաև պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց, այդ թվում՝ քաղաքացիական ծառայողների աշխատավարձի բարձրացման:

Հարգանքով՝



Արայիկ Հարությունյան